– 3 –

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ
Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՄԱՆՈՒԿԵԱՆ

LOCUM TENENS OF CATHOLICATE
OF ALL ARMENIANS
ARCHBISHOP TORKOM
MANOOGIAN

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
Տելեքս: 243326 KREST SU
Ֆաքս: (78852) 151077
Հեռ. (78852) 288666
57 07 Կառ.

REPUBLIC OF ARMENIA
HOLY SEE OF ST. ETCHMIADZIN
Telex: 243326 KREST SU
Fax: (78852) 151077
Tel: (78852) 288666
57 07 Govern.

Թիւ ______
AR/0-002

«______» ______________ 199 թ.
31 Յունուար 1995

Գերաշնորհ
Տ. Աղան Արք. Պալիօզեան
Առաջնորդ Հայց. Եկեղեցւոյ
Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Թեմին
Եւ Հայրապետական Պատուիրակ
Մայրագոյն Արեւելքի
Սիտնի

Սիրելի Սրբազան,

Գոհունակութեամբ տեղեկացանք ձեր բարի կարգադրութեանց մասին ուխտագնացութիւն մը կազմակերպելով դէպի Հնդկաստանի Չինսուրա քաղաքի Ս. Յովհաննէս Մկրտիչ Հայաստանեայց Եկեղեցին, որուն կառուցման 300 ամեակը կը զուգադիպի այս տարուան:

Հնդկաստանի Հայկական գաղութին պատմութիւնը հարուստ է աւանդութիւններով, Հայ մշակոյթի թանկագին իրագործումներով, կազմակերպուած համայնքներու կրթական, կրօնական, ազգային եւ ընկերային կեանքի աշխոյժ գործունէութեամբ, եւ մանաւանդ Հայկական ճարտարապետութեան կոթողական կառոյցներով, աղօթատուներով:

Այդ հրաշալիքներէն մէկն է Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցին, 1695 ին կառուցուած, մեր հայրերուն քրիստոնէական հաւատքով, նուիրումով, եւ հանճարով:

Ինչ որ մնացած է Հնդկաստանի Հայկական գաղութի անցեալէն, այսօր գուրգուրանքով պէտք է պահպանենք: Մեր ժողովուրդի քաղաքակրթութեան, մշակոյթի բարձր մակարդակի գոհար մնացորդներն են անոնք:

Կ'աղօթենք որ Հնդկաստանի հայութեան ներկայ սերունդը գիտակցօրէն իրենքզիրենք նկատէ ժառանգորդը, տէրն ու պահապանը, օտար ժողովուրդներուն հիացմունք պատճառող եւ մեր մշակոյթի եւ հոգեւոր ժառանգութեան տիպար ներկայացնող այսպիսի կոթողներու: Այն ատեն իսկապէս պիտի հրճուին հոգիները մեր հայրերուն, որոնք պիտի յիշուին սերունդէ սերունդ, օրհնելով իրենց զաւակներուն հայրենասիրութիւնը, մարդասիրութիւնը, ազգասիրութիւնը եւ Աստուածսիրութիւնը, ի փառս Աստուծոյ եւ ի բարգաւաճումն մեր հայրենիքին եւ ի սփիւռս ցրուեալ մեր ժողովուրդին:

Քրիստոսի Ս. Գերեզմանէն օրհնութիւն մեր ուխտաւոր զաւակներուն, եւ բոլորին «ուխտը ընդունական լինի»:

Սիրով եւ Օրհնութեամբ

Թորգոմ Պատրիարք Մանուկեան
Կաթողիկոսական Տեղապահ

digitised by A.R.A.R.@